

Գլուխ LI

Վրացական պարի առարկայական ծրագիրը

1. Ընդհանուր մաս

ա) Ներածություն

Ժողովրդական պարը վրացական մշակույթի անբաժանելի մասն է: Այն, որպես պարտադիր առարկա, զգալիորեն կհարստացնի ընդհանուր կրթական համակարգը:

Վրացական ժողովրդական պարի ուսուցումը ծառայում է աշակերտի ֆիզիկական և գեղագիտական զարգացմանը, պատանի սերնդի մեջ ընդհանուր կուլտուրայի մշակմանը՝ նուրբ ճաշակի, արժանապատվության զգացողության, աշխատասիրության, ճշգրիտ վարքագծի, ինչպես նաև սեփական անձը տիրապետելու կարողության զարգացմանը:

Վրացական պարը, ցայտուն կերպով արտահայտված բնույթով և ազդեցիկությամբ, աշակերտի մեջ զարգացնում է ազգային ինքնագիտակցությունն ու ձևավորում է ավանդույթների նկատմամբ հարգանքի զգացում:

բ) Վրացական պարի ուսուցման նպատակներն ու խնդիրները

Վրացական պարի ուսուցման նպատակն է.

- Վրացական պարի նկատմամբ սեփական վերաբերմունքի ձևավորումը:
- Պարային-ստեղծագործական կարողության զարգացումը:
- Պլաստիկ արտահայտչականության, կոորդինացիայի, շարժման կուլտուրայի մշակումը, բարեկազմության ձևավորմանը նպաստելը:

Այս կրթական նպատակներից ելնելով՝ դպրոցում վրացական պարի ուսուցումը նկատի է առնում հետևյալ խնդիրների լուծում.

- Շարժունակ հիշողության և ռիթմի զգացումի զարգացում:
- Սեփական մարմինը տիրապետելու և երաժշտության բնույթը հաղորդելու կարողության զարգացում:
- Վրացական ժողովրդական պարի հիմնական տարրերի ուսումնասիրում:
- Վրացական պարային մշակույթի ընդհանուր ծանոթություն:
- Աշակերտների ներգրավում ստեղծագործական գործընթացում:

գ) Վրացական պարի առարկայի ուսուցման կազմակերպումը

Առարկան ուսուցվում է տարրական աստիճանում, IV դասարանում, շաբաթը 1 ժամվա ընթացքում (ընդամենը 33 ժ.):

դ) Վրացական պարի ուսուցման ուղղությունների նկարագրությունը

Պարի ուսուցումն ծավալվում է երկու ուղղությամբ.

1. Գործնական կարողություններ ու հմտություններ:
2. Հաղորդակցություն, մեկնաբանություն:

Ուսուցումն այս երկու ուղղությունների սահմաններում ընթանում է զուգահեռաբար և սերտ կապակցված:

Գործնական կարողություններ ու հմտություններ

Այս ուղղության սահմաններում աշակերտները կծանոթանան վրացական պարի տարրերին և կուսումնասիրեն դրանք, կմշակվեն ու կձևավորվեն աշակերտների գործնական հմտությունները, որոնք ծառայում են նրանց պլաստիկ արտահայտչականության և պարային-իմպրովիզացիոն կարողությունների զարգացմանը:

Հաղորդակցություն, մեկնաբանություն

Այս ուղղության սահմաններում աշակերտները հմտանում են ուրիշի կողմից կատարված պարի քննարկմանը, մտքի հստակ փոխանցմանը՝ պատշաճ տերմինաբանության գործածությամբ ու վարքագծի նորմերի պահպանությամբ: Աշակերտները մասնակցում են համատեղ ստեղծագործական գործընթացներին, ներկա են գտնվում ու մասնակցում են տարբեր միջոցառումների, տեղեկատվություն են ձեռք բերում սովորած պարերի մասին:

Գլուխ LII

Տարրական աստիճանի առարկայական իրազեկությունները

IV դասարան Վրացական պար

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Գործնական կարողություններ ու հմտություններ	Հաղորդակցություն, մեկնաբանություն
Վ.պ.IV.1. Աշակերտը ճանաչում է վրացական պարի տարրերը և կարող է գործածել դրանք:	Վ.պ.IV.6. Աշակերտը կարող է արտահայտել սեփական վերաբերմունքն ուրիշի կատարած պարի նկատմամբ:
Վ.պ.IV.2. Պարելու ժամանակ աշակերտը կարող է պահպանել կոորդինացիան:	Վ.պ.IV.7. Աշակերտը կարող է գործածել պարից սովորած տերմինները:
Վ.պ.IV.3. Աշակերտը կարող է պարել անհատականորեն և ուրիշների հետ միասին:	Վ.պ.IV.8. Աշակերտը կարող է ճանաչել ու բնութագրել սովորած վրացական պարերը:
Վ.պ.IV.4. Աշակերտը կարողանում է լսած երաժշտական նյութի հիման վրա իմպրովիզացիա անել:	
Վ.պ.IV.5. Աշակերտը կարող է կազմակերպել սեփական ուսումնական գործունեությունը:	

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները.

Ուղղություն. Գործնական կարողություններ ու հմտություններ

Վ.պ.IV.1. Աշակերտը ճանաչում է վրացական պարի տարրերը և կարող է գործածել դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հայտնաբերում է պարի ծանոթ տարրերը:
- Պարելու ժամանակ կատարում է հիմնական քայլերը:
- Պատշաճ կերպով է փոխանցում պարի բնույթը:
- Գործածում է սղոյալով ու պպգուկով տարատեսակներ:
- Կատարում է մատների ծայրերով ու ծնկներով պարզ գործողություններ:
- Պարելիս ճիշտ է կողմնորոշվում տարածության մեջ:

Վ.պ.IV.2. Պարելու ժամանակ աշակերտը կարող է պահպանել կոորդինացիան:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նրբագեղ է շարժում մարմինը:
- Չի լարվում շարժում կատարելիս:
- Տարբեր հաշիվների վրա՝ մատների ծայրերին է բարձրանում:
- Կատարում է մեկ, երկու և երեք հպումով շարժումներ:
- Տարբեր դիրքերով կանգնում է մեկ ոտքի և երկու ոտքերի վրա:

Վ.պ.IV.3. Աշակերտը կարող է պարել անհատականորեն և ուրիշների հետ միասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պարելիս շարժվում է ուղիղ գծով, անկյունագծով, գալարաձև, աղեղնաձև, շրջանաձև, սլաքային:
- Կատարում է պարային շարժումներ, գործողություններ, համակցություններ, դրվագներ, պարզ համակցություններ՝ ինքնուրույն, գույգով, խմբով:
- Ուրիշների հետ միասին մասնակցում է շուրջպարերին:
- Շարժվում է գույգի, խմբի հետ միաժամանակ:
- Ուրիշների հետ պարելիս պահպանում է պատշաճ հեռավորությունը:
- Զանգվածային պարի ժամանակ, չի խախտում ամբողջականությունը

Վ.պ.IV.4. Աշակերտը կարողանում է լսած երաժշտական նյութի հիման վրա իմպրովիզացիա անել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Շարժումով հետևում է պարին, փոխանցում է ռիթմը:
- Երաժշտության բնույթը փոխանցում է շարժումով:
- Առաջարկված գործողություններից ընտրում է տվյալ պարին համապատասխանը:
- Անձանոթ երաժշտության տակ պարելիս գործածում է ուրիշ պարերին բնորոշ տարրեր:

Վ.պ.IV.5. Աշակերտը կարող է կազմակերպել սեփական ուսումնական գործունեությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ժամանակին է ներկայանում փորձին:
- Բերում է ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ իրերը:
- Ակտիվորեն ընդգրկված է դասաժամի ընթացքի մեջ:
- Մասնակցում է հարցմանը:

Ուղղություն. Հաղորդակցություն ու մեկնաբանություն

Վ.պ.IV.6. Աշակերտը կարող է արտահայտել սեփական վերաբերմունքն ուրիշի կատարած պարի նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դրական կամ բացասական վերաբերմունք է արտահայտում տեսած պարի նկատմամբ:
- Ծանոթ և անծանոթ պարերը տարբերում է իրարից:
- Կարծիք է հայտնում, թե որքանով է իր տեսած պարը համապատասխանում ուղեկցող երաժշտությանը, առաջարկում է կոնկրետ դրվագներ կատարելու սեփական տարբերակը:
- Ստույգ ձևով է արտահայտում սեփական վերաբերմունքը:

Վ.պ.IV.7. Աշակերտը կարող է գործածել պարից սովորած տերմինները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խոսելիս ճիշտ է արտաբերում սովորած տերմինները:
- Անհրաժեշտության դեպքում մեկնաբանում է դրանք:
- Իր համար անծանոթ գործողությունը, շարժման անվանումը, տերմինը ճշտելու համար հարցեր է տալիս:

Վ.պ.IV.8. Աշակերտը կարող է ճանաչել ու բնութագրել սովորած վրացական պարերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Երաժշտություն լսելիս հասկանում է պարը:
- Ճանաչում և անվանում է սովորած պարերին բնորոշ գործողությունները:
- Սովորած պարերը բնութագրում է ըստ կատարողների կազմի, բովանդակության, ժանրի:
- Ըստ պարերի՝ տարբերում է հագուստները (տարազները):
- Անվանում է պարին ուղեկցող երաժշտության համար անհրաժեշտ երաժշտական գործիքները:

Ծրագրի բովանդակությունը

Դրվագներ պարերից.

1. «Դավլուր-քարթուլի»:
2. Ընտրությամբ. «Աջարական», «Մթիուլական» և այլն:

Պարի տարրերը.

- Հիմնական քայլերը (*առաջ, հետ, կողքի*):
- Սղղումներ:
- Պպգուկների տարատեսակներ:
- Մատների ծայրերով պարզ գործողություններ:

Վարժություն.

- Չորսուի մոտ և դահլիճի մեջտեղում:
- Մատների ծայրերով բարձրանալ-իջնել (*8, 4, 2, 1 հաշվով*):
- Մատների ծայրերով ազատ հավել հատակին (*2, 1 հաշվով*):
- Մատների ծայրերը հաջորդաբար հպել հատակին:
- Երեք հպումով շարժում:

Սղղումների նախապատրաստական վարժություններ.

- Հասարակ, սահուն սղղում:
- Հասարակ պպգման նախապատրաստական վարժություն: